# <u>Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 34</u>

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ*
*ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## <u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը</u>

2. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակի համայնքային սեփականության 2019թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

6. Աշտարակ համայնքի ավագանու 03.04.2012թ. N 14-Ա և 30.08.2012թ. N 2-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. <<Ռելիսոֆթ>> ՍՊԸ-ին Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

13. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

**9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 2 - Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություն կատարելու Աշտարակ համայնքի 2020թ. տարեկան բյուջեում:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ բյուջեի փոփոխությունը պայմանավորված է նախորդ տարվա ազատ մնացորդը 2020 թվական տեղափոխելու հետ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի ծախսերի և եկամուտների կատարողականը:

Շ. Վահանյանը նշեց, որ եկամտային մասով 2019թ. տարեկան բյուջեի սեփական եկամուտները կատարվել է 106.7 տոկոսով:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 4</u> - Աշտարակի համայնքային սեփականության 2019թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների, ինչպես նաև հաստատել հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված ապրանքների ցանկը:

Հարցի շուրջ ելույթ ունեցավ և հարցեր ուղղեց Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի և համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 5</u> - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի տարածքում գտնվող որոշ գույքերի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Յ Ի Ն – 6</u> - Աշտարակ համայնքի ավագանու 03.04.2012թ. N 14-Ա և 30.08.2012թ. N 2-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, անվավեր ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 03.04.2012թ. N 14-Ա և 30.08.2012թ. N 2-Ա որոշումները:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց վերը նշված որոշումների բովանդակությունները:

Ելույթով հանդես եկան և զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Կ.Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Տ. Գալստյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Յ Ի Ն – 7</u> - <<Ռելիսոֆթ>> ՍՊԸ-ին Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկից 1 /մեկ/ սենյակ /16քմ/, ամսական 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով վարձակալությամբ <<<Ռելիսոֆթ>> ՍՊԸ-ին տրամադրելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց և ելույթով հանդես եկավ Ս. Օվոյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Յ Ի Ն – 8</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Տ. Գալստյանը և Ս. Օվոյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 9</u>* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը աճուրդ-վաճառքով օտարել և համաձայն <<ԷՅ ԷՅ ԷՍ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի արժեքի վերաբերյալ եզրակացության հաստատել մեկնարկային գին 920 000 ՀՀ դրամ:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ն. Անդրեասյանը, Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 10</u>* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդ-վաճառով օտարելու թույլտվություն տալուն և մեկնարկային գին սահմանելուն:

**9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 11</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամաս, որի իրադրության հատակագիծը կցված է նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս.Օվոյանը, Տ. Գալստյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 12</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն:

Զեկուցողը նշեց, որ նախկինում սխալ քարտեզագրման արդյունքում նշված հողատարածքները հաշվառվել են անհայտ քաղաքացու սեփականություն, սակայն դրանք իրականում հանդիսանում են համայնքային սեփականություն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Տ.Գալստյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8-ԿՈՂՄ, 1-ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 13</u> - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը և առաջարկեց հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0410-0028 ծածկագրում գտնվող քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 4.25հա գյուղատնտեսական

նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոխելուն: Համայնքի ղեկավարը միաժամանակ նշեց, որ փոփոխությունը կայանալու դեպքում մոտ 170 մլն. ՀՀ դրամ գումար մուտք կլինի համայնքի բյուջե:

**10- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2020 թվականի հունվարի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ՂԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ